



**ԱՐԵՎԻՆ Բ ԾԼՈՒՅ ՅԻ ՔԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԼՄԻՆ ՆՅ ԵՒ ԿԼՄՕՔՆ ԼՁԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԵՊՈՍ ԵՒ ԿԼԹՈՂԻԿՈՍ ԼՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՑ,
ԾԼՅՐԸԼԳՈՅՆ ՊԸՏՐԻԸՐՔ ՀԼՄԸՁԳԸԿԸՆ ՆԸԻԼՄԵՆԸՐ ԸԹՈՌՈՑ
ԱՐԸՐԸՏԵԸՆ ԸՌԸՔԵԼԸԿԸՆ ՄԸՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԸՄՆԻ**



ՔՐԻՍՏՈՍԱԽԸՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՁՈՅՆ ԵՒ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԼՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԼՆՅ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ՎԱՐԱՊԵՏԱՅ, ՔԱՅԼԱՆՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱՊԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՎՐԳՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ
ԵՒ ՍԻՐԵՅԵԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՅԵԼ ԺՈՂՈՎՐԴԵԼՆ ՀԱՅՈՑ

*«Հուսովք Քով Քրիստոս,
ամենքեան լուսաւորեցաք»
(Ժամագիրք):*

Սիրեցեալ ժողովուրդ հայոց ի շայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս,
Այս տարի լրանում է Աստուածաշունչ մատենաի հայերէն տպագրութեան 350-րդ տարեդարձը՝ հայոց կեանքում Քրիստոսի լոյսը առատացնելու մեծաշնորհ, աստուածօրինեալ գործի պանծալի յոբելեանը:

Սուրբ Գիրքը հայախօս դարձաւ 5-րդ դարում, երբ Սուրբ Սահակ շայրապետը, Աստուծոյ խօսքը հաւատացեալ մեր ժողովրդին հասկանալի դարձնելու անհրաժեշտութեամբ, Սուրբ Մեսրոպ Մաշտոց երանաշնորհ վարդապետին յանձնարարեց ձեռնամուխ լինել հայոց գրերի ստեղծման բազմերախտ գործին: Գրերի գիւտից յետոյ դարեր շարունակ մեր վանքերում լուսամիտ գրիչները հազար-հազարներով ընդօրինակեցին Աստուածաշունչ մատենան եւ նրա առանձին գրքերը: Աստուծոյ խօսքը պարունակող, Քրիստոսի մասին պատմող մագաղաթը մեր ժողովրդի համար դարձաւ ամենաթանկ հարստութիւնը բոլոր գանձերի մէջ: Աստուածաշնչի թարգմանութեամբ ու տարածմամբ լուսաւորուեց աշխարհը հայոց, պայծառացաւ Քրիստոսի լոյսով, հաւատքն ամրացաւ, սերը բազմացաւ, յոյսն առատացաւ, շնորհը լիացաւ՝ բխեցնելով մեր ժողովրդի հոգու եւ մտքի յորդահոս արգասիքները:

Տպագրութեան գիւտից յետոյ, երբ Եւրոպայում սկսեց տպագրուել մեծաքանակ գրականութիւն, դժուար էր հաւատալ, որ ասպատակութիւնների ենթարկուող, հալածանքների ու նեղութիւնների մէջ գտնուող մեր ժողովուրդը կարճ ժամանակ անց ծաղկեցնելու է նաեւ հայերէն տպագրութիւնը: Աստուծոյ օրհնութեամբ գրատպութեան գիւտից մի քանի տասնամեակ անց՝ 1512 թուականին, Յակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում լոյս ընծայուեց հայալեզու առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը»՝ սկիզբ դնելով հայ տպագրութեան փառաւոր աւանդներին: Գրքի, ուսման ու գիտութեան հանդէպ անսահման սէր ունեցող մեր ժողովուրդը ոչինչ չխնայեց, որպէսզի տպագրութեան ճանապարհով լուսաւորութիւնն առաւել տարածուի մեր երկրում: Յատկապէս անհրաժեշտութիւն էր Սուրբ Գրքի տպագրութիւնը, որի նպատակով Յակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի կողմից Եւրոպա առաքուեց Սուրբ Էջմիածնի միաբան Ոսկան Երեւանցի վարդապետը: Լուսամիտ եկեղեցականը նիւթական շատ ծանր պայմանների ու զրկանքների մէջ բազմաթիւ դժուարութիւններ ու խոչընդոտներ յաղթահարեց, օգնութիւն գտնելու ակնկալիքով այցելեց Եւրոպական տարբեր բաղաքներ ու հայաշատ բնակավայրեր եւ անխոնջ ջանքերով 1666 թուականին Ամստերդամում հրատարակեց հայերէն առաջին Աստուածաշունչը:

Սուրբ Գրքի տպագրութիւնը նշանակալի հանգրուան եղաւ մեր ժողովրդի ու եկեղեցու պատմութեան մէջ: Յաջորդող տասնամեակներին եւ յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տպարանի հաստատումից յետոյ բազմապատկուեց հայալեզու գրականութիւնը, հարստացաւ հոգեւոր եւ գիտական արժէքաւոր բազմաթիւ աշխատութիւններով:

Սուրբ Գրքի տպագրութեան յոբելեանն այսօր առիթ է հաւատաւոր հայորդեաց համար՝ երախտագիտութեամբ խոնարհուելու հայ գրի բոլոր նուիրեալ մշակների պայծառ յիշատակի, նրանց անմահ գործի առջեւ:

Մեր յորդորն ենք բերում թեմական եւ համայնքային մեր կառոյցներին, կրթական ու գիտական հաստատութիւններին՝ պատշաճ միջոցառումներով ու տօնախմբութիւններով նշանաւորելու Աստուածաշունչ մատենաի տպագրութեան արժանայիշատակ յոբելեանը: Մաղթում ենք, որ մեր պատմութեան այս կարեւոր իրադարձութեան յիշատակութիւնն առաւել զօրացնի աշխարհասփիւռ Մեր զաւակներին՝ ամուր պահելու նախնեաց հաւատքը եւ հաւատարմութիւնը ազգային աւանդներին, որպէսզի Քրիստոսի լոյսը շարունակի սիրով, նուիրումով ու երկնային շնորհներով լցնել մեր կեանքը:

Մեր աղօթքն է, որ Քրիստոս մեր Տէրը իր օրհնութեան ու շնորհաց լոյսը հանապազ սփռի հայոց աշխարհում, հանուր հայ կեանքում եւ ամենախնամ իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի հայրենի մեր երկիրը, Առաքելական մեր Սուրբ եկեղեցին եւ աշխարհասփիւռ ազգս հայոց այսօր եւ յաւիտեան. ամէն:

«Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են՝ եւ ի յանդիմանութիւն, եւ յուղղութիւն, եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ. Տիմ. Գ. 16-17):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28 Յուլիսի
յամի Տեառն 2016 եւ ի թուին հայոց ՌՆԿԵ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 963

